ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞վ է ստորև գրված տողերի հեղինակը. «Ամուսնանալ նշանակում է կիսով չափ պակասեցնել սեփական իրավունքները և կրկնակի մեծացնել պարտականությունները»։**

1. Պլատոն
2. Ի. Կանտ
3. Արիստոտել
4. Ա. Շոպենհաուեր

2 **Ի՞նչ համակարգ է ձևավորվում լեզվի, մշակույթի, կրոնի և այլ բաղադրիչների հիման վրան. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Ազգային ինքնություն
2. Մարդկային համակեցություն
3. Սոցիալական համագործակցություն
4. Համայնք

3 **Հունարեն «Էթնոս» բառը հայերեն նշանակում. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Ազգ
2. Խումբ
3. Պետություն
4. Ժողովուրդ

4 **Ո՞վ է ստորև գրված խոսքերի հեղինակը. «Ով գիտությամբ և արդարությամբ է վարում իշխանությունը, բարի համբավ է ձեռք բերում, ինչպես գիտուն բժիշկը, որ գործով է իմաստուն և ոչ թե սոսկ անվանմբ»։**

1. Հովհաննես Թումանյան
2. Նելսոն Մանդելա
3. Հովհաննես Երզնկացի
4. Օնորե դը Բալզակ

5 **Ինչպե՞ս է կոչվում Ֆրանսիայի Հանրապետության խորհրդարանը**

1. Համայնքների պալատ
2. Կոնգրես
3. Ծերակույտ
4. Ազգային ժողով

6 **Ժողովրդավարական համակարգում իշխանության աղբյուրը հանդիսանում է.**

1. Իշխանությունը
2. Տիտղոսակիր ազգը
3. Մեծամասնությունը
4. Ժողովուրդը

7 **ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը սահմանում է.**

1. ՀՀ-ն քրիստոնեական, սոցիալական, ժողովրդավարական պետություն է
2. ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, ազգային և սոցիալական պետություն է
3. ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն է
4. ՀՀ-ն ինքնիշխան, սոցիալիստական սոցիալական, իրավական պետություն է

8 **Պնդումներից ո՞րն է սխալ**

1. Շառլ Մոնտեսքյոն նախապատվությունը տալիս էր կառավարման հանրապետական ձևին
2. Իշխանությունների տարանջատման և հավասարկշռման սկզբունքը ժողովրդավարության հիմքերից մեկն է
3. Դատական և օրենսդիր իշխանությունները անկախ են, բայց որոշ դեպքերում գործադիր իշխանությունը՝ կառավարությունը կարող է փոխարինել դրանց
4. Յուրաքանչյուր իրավական երկրում գործում է Սահմանդրական դատարան, որը քննարկում է օրենքներն ու որոշում դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը

9 **Կոռուպցիան լատիներեն բառ է, որը նշանակում է.**

1. Կաշառք
2. Թալան
3. Այլասերում
4. Գողություն

10 **Ըստ հոլանդացի փիլիսոփա և մշակութաբան Յոհան Հայզինգայի մարդկային մշակույթի ո՞ր դրսևորումն է ամենահինը**

1. Աշխատանք
2. Սեր
3. Խաղ
4. Առևտուր

11 **Ստորև նշված տարբերակներից ընտրեք այն, որն ամենաճշգրիտն է նկարագրում «հանդուրժողականություն» հասկացությունը։**

1. Հանդուրժողականությունը մշակութային ու սովորութային դրսևորումների նկատմամբ հարգանքն ու տարածումն է, անկախ մարդու հիմնարար իրավունքների վրա դրանց ազդեցությունից
2. Հանդուրժողականությունը ուրիշների արժեքների, մոտեցումների, հավատալիքների և այլ դրսևորումների ճանաչումը, ընդունումը և դրանցնկատմամբ հարգանքն է։
3. Հանդուրժողականությունը հասարակության այլ անդամների ինքնաարտահայտման ձևերի ընդունումն ու հարգանքն է, անգամ եթե դրանց պատճառով սահմանափակվում է այլոց իրավունքների իրացումը։
4. Հանդուրժողականությունը մշակութային ու սովորութային դրսևորումների նկատմամբ հարգանքն է, անկախ մարդու հիմնարար իրավունքների վրա դրանց ազդեցությունից։

12 **Հին հույն փիլիսոփա Արիստոտելը մարդուն համարում էր**

1. Աստվածային էակ
2. Բնության տիրակալ
3. Քաղաքական էակ
4. Բանական կենդանի

13 **Ո՞ր փիլիսոփան է առաջ քաշում հասարակական դաշինքի տեսությունը՝ բացառելու համար բոլորի դեմ բոլորի պատերազմ վիճակը**

1. Թոմաս Հոբս
2. Արիստոտել
3. Ֆրենսիս Բեկոն
4. Դեյվիդ Հյում

14 **Ստեղծագործականությունից և անհատականությունից զուրկ ու սպառողականության հիմքի վրա գոյություն ունեցող հասարակությունները կոչվում են:**

1. Տեղեկատվական հասարակություն
2. Ամբոխ
3. Զանգվածային հասարակություն
4. Գլոբալ ինքնությամբ հասարակություն

15 **Նշվածներից ո՞րն է Պայդեայի կրթական համակարգի հիմնաքարը:**

1. Ճարտասանություն
2. Մարմնամարզություն
3. Գիտությունների սերտում
4. Հոգու խնամք

16 **Ի՞նչ է նշանակում «Հոգևոր համահարթեցում»**

1. Ճաշակների և հայացքների բազմազանություն
2. Արժեքների և գաղափարների բացակայություն
3. Ճաշակների և հայացքների ստանդարտեցում
4. Արժեքների և գաղափարների երկխոսություն

17 **Աշխարհի հանդեպ միասնական, ապրված մոտեցում չունեցող, տեղեկատվական պատառիկներով բավարարվող, հատվածային աշխարհընկալմամբ մարդը կոչվում** է.

1. Զանգվածային մարդ
2. Սպառողական մարդ
3. Խճանկարին մարդ
4. Նիհիլիստ

18 **Ժողովուրդների և պետությունների հարաճուն ընդգրկումը տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական և մշակութային ոլորտների միասնական միջազգային գործընթացներում կոչվում է.**

1. Մշակույթանացում
2. Գլոկալիզացիայի
3. Գլոբալիզացիա
4. Զանգվածայնացում

19 Հին Հունաստանում երկար ժամանակ հենց դա էր համարվում գեղեցիկի չափանիշ. ինչի՞ մասին է խոսքը, եթե հունարենից այդ բառը թարգմանվում է որպես «կարգավորված», «ներդաշնակ».

1. կոսմոս
2. էվդեմոնիա
3. փսյուխե
4. անտրոպոս

20 Ո՞վ է ստորև ներկայացված խոսքերի հեղինակը.
«Գեղեցկությունը բնության մեծագույն գաղտնիքներից մեկն է, որի ազդեցությունը մենք տեսնում և զգում ենք, իսկ նրա էության մասին հստակ պատկերացում տալ շատերն են փորձել, բայց անհաջող»…

1. Արիստոտել
2. Սոկրատես
3. Պլատոն
4. Յոհան Վինկելման

21 Ո՞վ է «գեղեցկություն» բառը բացատրել հետևյալ կերպ.
«Գեղեցկություն» բառը որտեղ և ինչպես էլ գործածվի, նշանակում է հատկանիշներ, որոնց շնորհիվ մենք սիրում ենք իրը, հիանում դրանով կամ ձգտում դրան»:

1. Դենի Դիդրո
2. Ռոբին Ջորջ Քոլլինգվուդ
3. Դեյվիդ Հյում
4. Երվանդ Քոչար

22 Ստորև ներկայացվող հասկացություններից որի՞ բովանդակությունն է արտահայտվում մեջբերման մեջ.
«Գործի՛ր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզեիր, որ այն դառնա համընդհանուր օրենք»:

1. կատեգորիկ իմպերատիվ
2. ոսկե միջին
3. բարոյական օգտապաշտություն
4. հիպոթետիկ իմպերատիվ

23 **Նշվածներից ո՞րը խրախուսման եղանակ չէ.**

1. հավասարապես
2. ըստ ընդունակությունների
3. ըստ կարիքների
4. ըստ ցանկությունների

24 **Քոլբերն առանձնացնում էր բարոյական զարգացման երեք մակարդակ: Ստորև ներկայացվող մակարդակներից որի՞ բովանդակությունն է արտահայտվում մեջբերման մեջ.**
«Այս մակարդակում բարոյական կշռադատման մեջ սկսում են հաշվի առնել այլոց, հատկապես ընտանիքի և շրջապատի կարիքներն ու շահերը: Տվյալ մակարդակում կշռադատող մարդը ձգտում է անփոփոխ թողնել առկա վիճակը»:

1. սկզբունքային և հետպայմանական
2. մինչպայմանական
3. պայմանական
4. սկզբունքային կամ հետպայմանական

25 **Նշվածներից ո՞րը պատժին ներկայացվող պահանջ չէ.**

1. այն պետք է գործադրվի հիմնավորված
2. այն պետք է լինի տհաճ
3. այն պետք է լինի հաճելի
4. այն պետք է գործադրվի իրավասու անհատի կամ մարմնի կողմից

26 **Շարունակե՛ք 20-րդ դարի հայտնի գեղանկարիչ Սալվադոր Դալիի միտքը.**
«Մի՛ վախեցեք կատարելությունից, քանի որ…»՝

1. շատ արագ կհասնեք դրան
2. կատարելության մեջ ոչ մի լավ բան չկա
3. դուք ի ծնե կատարյալ եք
4. երբեք չեք հասնի դրան

27 **Սահմանափակ գործունակ անչափահասը գործարքներ կնքում է.**

1. չի կարող գործարք կնքել
2. ինքնուրույն
3. օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ
4. դատարանի վճռով

28 **Հայ միջնադարյան կանոնական իրավունքն ամփոփված է.**

1. Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք» աշխատության մեջ
2. Մխիթար Գոշի «Դատաստանագիրք» աշխատության մեջ
3. Դավիթ Ալավկաորդու «Կանոնագիրք» աշխատության մեջ
4. Հովհաննես Օձնեցու «Կանոնագիրք հայոց» ժողովածուի մեջ

29 **Ինչպիսի՞ պայմանների դեպքում կարող է կնքվել պայմանագիրը.**

1. ճիշտ են 2 և 3 պատասխանները
2. երբ կողմերը համաձայնության են հասնում պայմանագրի բոլոր էական կետերի վերաբերյալ
3. երբ կողմերի համաձայնությունն իր ձևով համապատասխանում է պայմանագրի ներկայացվող պահանջներին
4. ցանկացած պայմանագիր համարվում է կնքված միայն նոտարի կողմից վավերացնելու դեպքում

30 **Պետական իշխանությունն իրականացվում է համոզման և հարկադրանքի եղանակներով: Պետական հարկադրանքն ունի.**

1. համընդհանուր բնույթ
2. կամայական բնույթ
3. հայեցողական բնույթ
4. իրավական, որոշակի բնույթ

31 **Պետության խնդիրները և գործառույթները.**

1. ճիշտ պատասխանը բացակայում է
2. նույնական են
3. փոխկապակցված են
4. քարացած են

32 **Օրենքը պետական իշխանության օրենսդիր մարմնի կամ համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված և բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ է, որն ունի օրենսդրական գործընթացի հստակ փուլեր: Ընտրե՛ք ճիշտ հերթականությունը.**

1. Օրենսդրական նախաձեռնության փուլ, օրինագծի քննարկման և ընդունման փուլ, ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ
2. Օրենսդրական նախաձեռնության փուլ, ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ, օրինագծի քննարկման և ընդունման փուլ
3. Օրինագծի քննարկման և ընդունման փուլ, օրենսդրական նախաձեռնության փուլ, ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ
4. Ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ, օրինագծի քննարկման և ընդունման փուլ, օրենսդրական նախաձեռնության փուլ

33 **Ստորեւ նշված են մեջբերումներ ՀՀ Սահմանադրությունից, ընտրե՛ք ճիշտ պնդումը:**

1. Օրենքները եւ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում Սահմանադրական դատարանի վճռից հետո:
2. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսությունները եւ բազմակուսակցական համակարգը:
3. ՀՀ–ում մարդը բարձրագույն արժեք է:
4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձիք իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ժողովրդի կողմից:

34 **Ո՞ր երկրի Սահամանադրության նախաբանում է ներառված հետեւյալ միտքը. «...բազմազգ միասնական պետություն է՝ կազմված իր ժողովրդի բոլոր ազգություններից: Հաստատված են սոցիալիստական հարաբերություններ՝ հավասարություն, միասնականություն ու փոխօգնություն, որոնք պետք է շարունակական լինեն ու գնալով ավելի ամրանան»:**

1. Ռուսաստանի Դաշնություն
2. Իրանի Իսլամական հանրապետություն
3. Ֆրանսիա
4. Չինաստանի Ժողովրդական հանրապետություն

35 **Որտե՞ղ է առաջինը կիրառվել Սեռային հավասարություն հասկացությունը**

1. ԱՄՆ
2. Ֆրանսիա
3. Հունաստան
4. Գերմանիա

36 **Ինձ հատկապես ցնցեց այն, թե որքան էր փոքրացել երկրագունդը, իմ բանտարկության տասնամյակների ընթացքում»:**

Ո՞վ է այս մտքի հեղինակը

1. Վառլամ Շամալով
2. Մարտին Լյութեր Քինգ
3. Նելսոն Մանդելա
4. Պարույր Հայրիկյան

37 **Ըստ Ջոն Լոքի տեսության, ո՞ր երեք իրավունքներն են ընկած իրավական պետության սահմանադրական հիմքում**

1. Կյանքի, ազատության եւ պետության ծառայության
2. Կյանքի, ազատության եւ առողջության
3. Կյանքի, ազատության եւ ժողովրդավարության
4. Կյանքի, ազատության եւ ունեցվածքի պահպանման

38 **Ե՞րբ է ընդունվել «ՀՀ Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը**

1. 1996
2. 1993
3. 1994
4. 1995

39 **Ստորև նշված մտածողներից ո՞վ է 18-րդ դարում առաջարկել պետական իշխանությունը բաժանել երեք անկախ և իրար հակակշռող ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական.**

1. Իմանուիլ Կանտ
2. Ջոն Լոք
3. Շառլ Մոնտեսքյո
4. Դենի Դիդրո

40 **Ընտրե՛լ ճիշտ պատասխանը.**
Ըստ պետական մարմինների ստորակարգության մեջ գրված դիրքի պետական մարմինները լինում են.

1. ճիշտ են 3 և 4 տարբերակները
2. կոլեգիալ
3. կենտրոնական
4. տեղական

41 **Նշվածներից ո՞րը ենթաօրենսդրական ակտի տեսակ չէ /ըստ հրապարակման սուբյեկտների և գործողության ոլորտների/.**

1. գերատեսչական ենթաօրենսդրական ակտեր
2. ընդհանուր ենթաօրենսդրական ակտեր
3. տեղական ենթաօրենսդրական ակտեր
4. տարածքային ենթաօրենսդրական ակտեր

42 **Իրավունքի նորմի կառուցվածքային ո՞ր տարրի մասին է ստորև ներկայացված ձևակերպումը.**
Բուն վարքագծի կանոնն է, սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը: Դրանում նշվում է, թե ինչպիսին կարող է լինել, պետք է լինի կամ չպետք է լինի վարքագիծը հիպոթեզում նշված պայմանների առկայության դեպքում:

1. ճիշտ են ա և բ տարբերակները
2. հիպոթեզ
3. դիսպոզիցիա
4. սանկցիա

43 **Կատերե՛լ համապատասխանեցում:**

ա. Տարածքային հիմունքներով կազմված մեկ միասնական հանրույթ
բ. Մարդկության կամ ազգի նյութական և հոգևոր արժեքների ամբողջություն
գ. Լեզվական, մշակութային և կրոնական ընդհանրություններով էթնիկական խումբ
դ. Համագործակցության, հանդուրժողականության և փոխլրացման հիմքով միջավայր

1. Համակեցություն
2. Ազգ
3. Մշակույթ
4. Համայնք

1. ա-3, բ-4, գ-1, դ-2
2. ա-4, բ-2, գ-1, դ-3
3. ա-3, բ-4, գ-2, դ-1
4. ա-4, բ-3, գ-2, դ-1

44 **Համապատասխանեցնել տարբերակները.**

ա. Էմպրիզմ
բ. Ռացիոնալիզմ
գ. Ինտուիտիվիզմ

1. Բենեդիկտ Սպինոզա
2. Անրի Բերգսոն
3. Ֆրենսիս Բեկոն

1. ա- 2, բ- 3, գ-1
2. ա- 1, բ-3, գ-2
3. ա- 3, բ-1, գ-2

45 **Պնդումները համապատասխանեցնել փիլիսոփայական ուղղություններին**

ա. Գիտելիքի աղբյուրը փորձն է, որը հնարավոր է մեր զգայարանների միջոցով
բ. Մեր զգայությունները շատ թույլ են, այդ իսկ պատճառով որպեսզի տեսնենք, պետք է իմանանք
գ. Փորձառությունը, ստեղծագործ մտածողությունը, տաղանդը, գիտելիքների պաշարը կարող են ճանաչողության աղբյուր դառնալ

1. Ռացիոնալիզմ
2. Ինտուիտիվիզմ
3. Էմպիրիզմ

1. ա-3, բ-1, գ-2
2. ա-3, բ-2, գ-1
3. ա-2, բ-3, գ-1

46 **Հետազոտության ինդուկտիվ մեթոդի հաջորդական քայլերը դասավորեք ըստ հերթականության։**

ա. Վերլուծել տվյալները և առաջադրել վարկածներ
բ. Վերանայել վարկածները
գ. Փորձի միջոցով ստուգել վարկածները
դ. Հավաքել տվյալներ, փաստեր
ե. Կատարել ընդհանրացումներ, դուրս բերել կանոններ

1. դ, ա, բ, գ, ե
2. դ, ա, գ, ե, բ
3. դ, ա, գ, բ, ե
4. դ, ա, ե, բ, գ

47 **Ասույթները համապատասխանեցնել հեղինակներին**

1. Գործարարությունը պատերազմ է։
2. Այն ինչ շահավետ է հացթուխին, վնասաբեր է գնորդին
3. Ջուրն ավելի մեծ օգտակարություն ունի ադամանդի համեմատությամբ, բայց ինչու՞ է ջրի գինն ավելի ցածր ադամանդի գնից։
4. Սեփականության կտրուկ անհավասարությունը պետության հավասարակշռության համար վտանգավոր է։

Ա. Արիստոտել
Բ. Մ. Մոնտեն
Գ. Թ. Թյորներ
Դ. Ա. Սմիթ

1. ա-2, բ-3, գ-4, դ-1
2. ա-4, բ-1, գ-2, դ-3,
3. ա-4, բ–2, գ-1, դ–3
4. ա-3, բ-4, գ-2, դ-1

48 **Բերված օրինակները համապատասխանեցրեք մտահանգման աստիճանների հետ**

ա. Նա հաճախակի խաբել է ինձ։ Հետևաբար՝ նա ազնիվ մարդ չէ
բ. Բամբակի գները նվազում են, իսկ պահանջարկը մեծանում է, հետևաբար՝ բամբակի վաճառքը կաճի
գ. Այսօր կիրակի է, հետևաբար՝ այսօր անձրևելու է
դ. Բենզինի գները կտրուկ աճում են, հետևաբար՝ բենզինի սպառումը կտրուկ կնվազի
ե. Երեկ անձրևեց, հետևաբար՝ այսօր էլ է անձրևելու

1. Թույլ հիմնավորված եզրահանգում
2. Չհիմնավորված եզրահանգում
3. Չափավոր հիմնավորված եզրահանգում
4. Դեդուկտիվ հիմնավորված եզրահանգում
5. Ուժեղ հիմնավորված եզրահանգում

1. ա-5, բ-4, գ-1, դ-3, ե-2
2. ա-4, բ-5, գ-1, դ-3, ե-2
3. ա-4, բ-5, գ-2, դ-3, ե-1
4. ա-5, բ-4, գ-2, դ-3, ե-1

49 **Կատարե՛լ համապատասխանեցում.**

ա. Արվեստի այս տեսակի նպատակն է ստեղծել կենցաղի առարկաներ և ձևավորել մարդու միջավայրը գեղեցիկի կանոններով
բ. Այն հարթության վրա իրական աշխարհի պատկերումն է
գ. Այն երաժշտության «արձագանքն» է, ռիթմիկ մեղեդու ազդեցությամբ մարդկային մարմնի շարժումների ամբողջությունը
դ. Այն իրականության գեղարվեստական վերարտադրումն է խոսքի միջոցով
ե. Այն արվեստի այնպիսի տեսակ է, որում աշխարհի գեղարվեստական յուրացումն իրականացվում է բեմական գործողության միջոցով

1. Պար
2. Թատրոն
3. Դեկորատիվ-կիրառական արվեստ
4. Գեղանկարչություն
5. Գրականություն

1. ա-2, բ-3, գ-4, դ-1, ե-5
2. ա-4, բ-1, գ-2, դ-5, ե-3
3. ա-3, բ-4, գ-1, դ-5, ե-2
4. ա-3, բ-4, գ-2, դ-5, ե-1

50 **Կատարե՛լ համապատասխանեցում.**

ա. Նորմեր, որոնք նախատեսում են պետական հարկադրանքի ազդեցության միջոցներ իրավախախտման համար։

բ. Նորմեր, որոնք նախատեսում են իրավահարաբերության մասնակիցների իրավունքները և պարտականությունները։

գ. Նորմեր, որոնք հնարավորություն են տալիս կատարելու որոշակի դրական գործողություններ՝ երաշխավորված մյուս անձանց որոշակի պարտականություններով։

դ. Նորմեր, որոնք սահմանում են պահանջվող վարքագիծ։

ե. Նորմեր, որոնք պարտադրում են իրավահարաբերության մասնակիցներին չկատարել արգելված գործողությունը՝ սահմանելով նաև սանկցիան։

1. Իրավազորող
2. Իրավապահպան
3. Արգելող
4. Կարգավորիչ
5. Պարտադրող

1. ա-5, բ-2, գ-3, դ-4, ե-1
2. ա-2, բ-4, գ-3, դ-1, ե-5
3. ա-4, բ-1, գ-3, դ-2, ե-5
4. ա-2, բ-4, գ-1, դ-5, ե-3

51 **Ընտրե՛լ սխալ պնդումները.**

1. Պետության իրավական գործառույթը ենթադրում է՝ օրենսդրության ստեղծում, մարդու իրավունքների ամրագրում, ապահովում, պաշտպանություն, իրավախախտների բացահայտում և պատասխանատվության ենթարկում։
2. Պետության տնտեսական գործառույթը ենթադրում է՝ մարդու արժանապատիվ կյանքի համար պայմանների ապահովում, առողջապահության, հանգստի, կրթության, բնակարանային շինարարության և այլ ոլորտներում ծրագրերի մշակում և կենսագործում։
3. Պետության բնապահպանական գործառույթը ենթադրում է՝ մարդու կյանքի համար անվտանգ բնական պայմանների ապահովում, շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնում և բարելավում, բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովում։
4. Պետության սոցիալական գործառույթը ենթադրում է՝ տնտեսության կարգավորում, պետբյուջեի ձևավորում և կատարման վերահսկողություն, տնտեսական զարգացման ծրագրերի մշակում, ձեռնարկատիրության համար նպաստավոր պայմանների ստեղծում և այլն։
5. Պետության կրթամշակութային գործառույթը ենթադրում է՝ ազգային ինքնագիտակցության զարգացում, կրթության համընդհանուր և անընդհատ համակարգի կազմակերպում, գիտության և մշակույթի զարգացման օժանդակում, ժողովրդի մշակութային ժառանգության պահպանություն։

52 **Նշված տարբերակներից որո՞նք են կոռուպցիայի միանշանակ դրսևորումներ.**

1. Կլեպտոմանիա
2. Կաշառք ստանալ
3. Շորթում
4. Նվիրատվություն
5. Բարեգործություն
6. Թողտվություն
7. Լոբբինգ

53 **Նշվածներից ո՞րը չի մտնում Դավիթ Անհաղթի փիլիսոփայության վեց սահմանումների մեջ**

1. Փիլիսոփա նրան են անվանում, ով անբիծ և անարատ կյանք է վարում, որը հենց գործնական իմաստասիրությունն է
2. Փիլիսոփայությունը գիտություն է մարդկանց ու իշխանության մասին
3. Փիլիսոփայությունը գիտություն է մարդկային և աստվածային իրողությունների մասին
4. Փիլիսոփայությունը մտածմունք է մահվան մասին
5. Փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության

54 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները.**

1. Ամենամյա արձակուրդն օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին։ Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը /պաշտոնը/, վճարվում է միջին աշխատավարձ։
2. Հանգստանալու և սնվելու համար ընդմիջումը աշխատողին տրամադրվում է աշխատանքային օրվա կեսին, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց չորս ժամ հետո /երկու ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ/։ Աշխատողը չի կարող ընդմիջմանը բացակայել աշխատավայրից։
3. Աշխատանքային օրվա ընթացքում հանգստանալու լրացուցիչ ընդմիջումները տրամադրվում են մինչև 16 տարեկան աշխատողներին՝ նվազագույնը 30 րոպե, իսկ հատուկ ընդմիջումները՝ հատուկ պայմաններում /օրինակ՝ մտավոր հուզական գերլարված վիճակում/ աշխատողներին։
4. Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգիստի տևողությունը չի կարող պակաս լինել 8 ժամից։
5. Ամենշաբաթյա անընդմեջ հանգստի դեպքում ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ նաև շաբաթը։

55 **Ընտրել ճիշտ պնդումները**

1. Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից
2. ՀՀ նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով
3. ՀՀ նախագահ կարող է լինել 35 տարին լրացած, վերջին վեց տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը
4. ՀՀ նախագահն ընտրվում է ուղիղ քվեարկությամբ
5. Նույն անձը հանրապետության նախագահ կարող է ընտրվել մեկ անգամ
6. ՀՀ նախագահ ընտրվելու պարտադիր պայման է բարձրագույն կրթությունը
7. ՀՀ նախագահն ընտրվում է հինգ տարի ժամկետով

56 **Ընտրել ճիշտ պնդումները**

1. Անձին համաներել կարող են Սահմանադրական դատարանի որոշմամբ կամ նախագահի հրամանով։
2. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք
3. Արգելվում է մարդուն, իր կամքին հակառակ ենթարկել հոգեբանական հետազոտության
4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից։
5. Յուրանչյուր ոք ունի ֆիզիկական, սոցիալական եւ հոգեբանական անձեռնմխելիության իրավունք։

57 **Ընտրե՛լ սխալ պնդումները.**

1. Ըստ որոշումների ընդունման եղանակի պետական մարմինները լինում են կենտրոնական և տեղական։
2. Պետական հարկադրանքն ունի կամայական, հայեցողական բնույթ։
3. Իրավական հարկադրանքը ազատության օրինական սահմանափակումն է ուժային ճնշման ճանապարհով։
4. Պետության գործառույթները ոչ թե քարացած, այլ շարժուն երևույթներ են։
5. Պետաքաղաքական վարչաձևի տեսակները երկուսն են՝ ժողովրդավարական և հակաժողովրդավարական։

58 **Որո՞նք են մարդու հոգեկանն ուսումնասիրելու համար ստեղծված հիմնական մեթոդները**

1. Կոնտենտ
2. Թեստեր
3. Դիտում
4. Գիտափորձ
5. Համեմատական

59 **Ընտրե՛լ ճիշտ պնդումները. հոգեբանության բնագավառները դասակարգվում են**

1. Համայնքային հոգեբանություն
2. Անձի հոգեբանություն
3. Ենթախմբի հոգեբանություն
4. Ենթամշակույթի հոգեբանություն
5. Աշխատանքի հոգեբանություն

60 **Շուկայական տնտեսության սուբյեկտներն են.**

1. Բնակարանի շուկաները
2. Կապիտալի, աշխատանքի, բնական ռեսուրսները
3. Տնային տնտեսությունները
4. Ֆիրման կամ ձեռնարկությունը
5. Սպասարկման ծառայությունները